

## ՀԱԿՈՒ ՕՇԱԿԱՆԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

«Իր ամբողջ գործին նկարագիրն է ազնուական բարութիւն մը, մաքուր՝  
մեր ցեղին հոգիին նման»:

**Հակոբ Օշական**

**Ն. Մ. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ**

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Հայ գրականությունը զարգացման երկու ուղի է անցել՝ առաջ բերելով գրականության արևելահայ և արևմտահայ ճյուղավորումները: Հայ գրականության երկու ճյուղերի առկայությունը գիտակցվում էր դեռևս 19-րդ դարում<sup>1</sup>: Դրանց տարբերությունը միայն լեզվի հարցում չէր, այլև ժողովրդի երկու հատվածների ճակատագրի և թելադրված գոյավիճակների, պայմանների: Եթե 1920-ից հետո արևելահայ գրականությունը շարունակվեց իր պատմական հողի վրա և կոչվեց խորհրդահայ, ապա արևմտահայ գրականությունն իրեն արարող ժողովրդի բեկորների հետ ցրվեց աշխարհով մեկ՝ ստեղծելով հայ գաղթօջախներ ու վերաճելով սփյուռքահայ գրականության: Այդ գրականությունը միատարր չէր: Գրողների մի խումբ՝ Համաստեղ, Մնծուրի, Շուշանյան, փորձում էր վերհուշի ձևով թարմ պահել հայրենի գյուղաշխարհի, հարազատ եզերքի խնկարկունը: Մեկ այլ խումբ՝ Հ. Օշական, Վ. Թեքեյան, Կ. Ջարյան, փնտրում, բորբոքում ու վերահաստատում էր հայ գրականության մեջ *հայոց ազգային ոգին*, իսկ Շ. Շահնուրը, Վ. Շուշանյանը, Զ. Որբունին հայ գեների ուժացման ահազանգն էին հնչեցնում օտար ավերում<sup>2</sup>:

Ընդամին, թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ գրականությունները զարգացման ճանապարհին ունեցան իրենց առնչությունների որոշակի ուղղությունները, կառուցվածքը: Այսպես, հանրահայտ է, որ արևմտահայ գրականությունը շատ ավելի կապված էր ֆրանսիական գրականության ավանդների հետ, իսկ արևելահայը՝ ռուսականի<sup>3</sup>: Գրականությունից առավել, սակայն, երկուստեք այդ ավանդույթների անվերապահ ընդունողը դարձավ տեսական, գրականագիտական միտքը: Արևմտահայ գրադատությունը արվեստի ոլորտից դուրս էր դիտում արևելահայ բանաստեղծությունը հենց այն բանի համար, որ վերջինս չէր հետևում դարավերջի ֆրանսիական եսակենտրոն ավանդությանը<sup>4</sup>: Ընդհանրապես, 20-րդ դարասկզբին հայ իրականության մեջ սկսվեց աննախընթաց մի մշակութային շարժում գեղարվեստի բոլոր ճյուղերի մեջ, հայագիտության ու հայրենագիտության բոլոր ասպարեզների վերելք<sup>5</sup>: Երկու հատվածներում էլ հայ

<sup>1</sup> Տե՛ս **Ա. Եղիազարյան**, 20-րդ դարի հայ գրականություն, դեմքեր և խնդիրներ, էջ 314, Եր., 2002թ.:

<sup>2</sup> Տե՛ս **Վ. Գաբրիելյան**, Սփյուռքահայ գրականություն, էջ 15, Եր., 1987թ.:

<sup>3</sup> Տե՛ս **Ա. Եղիազարյան**, 20-րդ դարի հայ գրականություն, դեմքեր և խնդիրներ, էջ 315:

<sup>4</sup> Տե՛ս **Կ. Դալլաբջյան**, Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության, էջ 309, Եր., 1994թ.:

<sup>5</sup> Տե՛ս **Ս. Աղաբաբյան**, Հայ սովետական գրականության պատմություն, հ. 1-ին, էջ 8, Եր., 1986:

գրականության վերածնության հույսերի և մեծ հավատի հոգեբանությունն էր գերիշխողը, ապագայի գեղագիտական սպասելիքների ու կանխորոշումների հիմնական բովանդակությունը բխում էր նույն ակունքից: Դարասկզբի գեղարվեստական կյանքը թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ հատվածներում լեփ-լեցուն էր «գրական երազանքներով»՝ ապագայի լուսավոր կանխատեսումներով: Ուշագրավ է այն փաստը, որ երկու հատվածների գրագետները գտնում էին, որ նոր ձևավորվող սերունդը ինքնաբերաբար պետք է դառնա հայ ժողովրդի՝ անձնվեր գործունեությամբ ստեղծված հոգևոր մեծահարուստ գանձարանի ժառանգորդն ու կտակարարը: Եվ այս առումով, արևմտահայ և արևելահայ գրականությունների մեջ միմյանց ճանաչելու և արժևորելու խնդիրը միշտ էլ մնաց գրողների ու գրականագետների ուշադրության ծիրում, ինչը երբեմն հակասական ու իրարամերժ կարծիքների տեղիք տվեց: Այսօր կասկածից դուրս է արևմտահայ բանաստեղծության դերը և տեղը հայ գրականության համակարգում, սակայն այս հարցի շուրջ ժամանակին եղել են տարակարծություններ: Հայտնի է, օրինակ, որ Վահան Տերյանն ամբողջովին մերժում էր արևմտահայոց պոեզիան, հատկապես հեթանոսական շարժումը, պոետական ոճի վերամբարձությունը<sup>6</sup>: Դարասկզբին ձևավորված նոր գրական շարժումը, որի առաջամարտիկը Վարուժանն էր, գրական համապատկերի առաջին պլան էր մղում կնոջն ու սերը, նկարագրում մարդուն՝ իր, հաճախ թաքուն, բնազդական գրգիռներով: Ժամանակին Ալեքսանդր Շիրվանզադեն էլ բավականին խիստ արտահայտվեց Դանիել Վարուժանի՝ այս կարգի ստեղծագործությունների վերաբերյալ:

Գրական մեծություններին ընդունել-չընդունելու խնդիրը վաղուց հայտնի է աշխարհում իր անբացատրելիությամբ: Օրինակ, հայտնի է, որ Տոլստոյը բնավ չէր ընդունում Շեքսպիրի մեծությունը, ռուս հանրահայտ գրաքննադատ Պիսարևը կասկածի տակ էր դնում Պուշկինի գրական վաստակը, ֆրանսիացիներից շատերը «Վերթերից» այս կողմ չեն ընդունում Գյոթեին՝ համարելով նրան սպառված: Գրականագիտական մտքի նման թնջուկներն անբացատրելի են, շատ դեպքերում նաև՝ անհասկանալի:

Վստահաբար դրանց թվին է պատկանում նաև արևմտահայ (հետագայում՝ սփյուռքահայ) հասարակական մտքի ու գրականության կազմավորման ու լինելիության շրջանում Հովհաննես Թումանյանի գրական ժառանգության գնահատման խնդիրը: Արևմտահայ (սփյուռքահայ) գրականագիտական միտքը քիչ թե շատ հաջողությամբ ջանաց գնահատել Նալբանդյանին, Իսահակյանին, Տերյանին, մինչև իսկ Չարենցին՝ յուրաքանչյուրին որոշակի հստակության ( սխալ, թե ճիշտ՝ այս պարագայում կարևոր չէ) սահմաններում: Հանելուկ մնաց Հ. Թումանյանի նկատմամբ առաջացած վերաբերմունքը: Նա այդպես էլ չստացավ իր արժանի գնահատականը թե՛ արևմտահայ, թե՛ ժամանակակից Սփյուռքի գրականագիտական մտքի կողմից<sup>7</sup>:

Հ. Թումանյանի գրական ժառանգությունը միանշանակ է գնահատվել մեզանում և գրական նոր արևելումների կարիքը չունի: «Ամենայն հայոց

<sup>6</sup> Տե՛ս **Հ. Թամրազյան**, Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, էջ 186, Եր., 1986թ.:

<sup>7</sup> Տե՛ս **Կ. Դալլաբյան**, Ակնարկներ ..., էջ 360:

բանաստեղծի» պատվավոր կշում շնորհվեց նրան՝ ի նշան համաժողովրդական սիրո ու երախտագիտության: Թումանյանը գրականություն բերեց ժողովրդական կյանքի այնքան հարագատ շունչը՝ հանձին պատմության դաժան քառուղիներում կատարելագործված, «աստվածացված», «աստծո» չափ շռայլ ու իմաստուն, միաժամանակ թեև հասարակ, բայց հոգեկան կառուցվածքով գեղեցիկ մարդու իդեալը<sup>8</sup>:

Վստահաբար կարելի է ասել, որ Թումանյանի անունը հայտնի էր արևմտահայությանը: 1923 թ. բանաստեղծի մահվան կապակցությամբ սփյուռքահայ մանուկն անդրադարձավ նրա վաստակի, գրական ժառանգության արժևորման խնդրին, որը բավականին հեռու էր միանշանակ լինելուց:

1921թ. ՅՕԿ-ի կազմավորման գործերով Յ. Թումանյանն այցելեց Պոլիս, ինչը մեծ նշանակություն ուներ հայության երկու հատվածների համար էլ, քանի որ, այդպիսով, պետական մակարդակով Յայրենիք-Սփյուռք առաջին կապերի «ոսկե կամուրջը» զցվեց<sup>9</sup>: Պոլսահայությունը գրկաբաց ընդունեց մեծ բանաստեղծին, այդ մասին է վկայում 1928թ. «Մշակի» 207 համարում լույս տեսած հոդվածը, որտեղ խոսվում է այն մասին, թե Պոլսում բանաստեղծի պատվին հանդիսություններ կազմակերպվեցին: Այդ առիթով բեմականացվեց «Անուշը», ինչը մեծ հաճույք պատճառեց հանդիսատեսին, որն իր գոհունակությունն ու մեծարումն արտահայտեց ջերմ ծափերով ու Թումանյանին բեմ հրավիրելով: Ականատեսը պատմում է, որ բանաստեղծը հուզմունքից ճերմակ թաշկինակով արցունքներն էր մաքրում և օթյակից ձեռքով անում՝ ի նշան հանդարտության: Իսկ երբ նրան չդադարող ծափողջույններով խնդրում են բեմ բարձրանալ, նա հուզված պատասխանում է. «Սիրելի հանդիսականներ, ես ի՞նչ կարող եմ ասել Ձեզ, քանի որ իմ Անուշը խոսում է բեմից»<sup>10</sup>:

Վահան Թոթովենցն իր հուշերում պատմում է, թե երբ 1922թ. Ամերիկայից Պոլիս է վերադարձել, այստեղ նրան պատմել են, որ Թումանյանի՝ Պոլսում եղած ժամանակ, տեղի գրական «Ատրուշան» ընկերությունը գրական հավաք է կազմակերպել նրա պատվին: Ելույթ է ունեցել Պոլսի գրական շրջանակներում մեծ հեղինակություն վայելող Յակոբ Զյուֆեջյանը /Յ. Օշական/, որը խստագույն քննադատության է արժանացրել արևելահայ պոեզիան՝ ընդհանրապես և Թումանյանի քնարերգությունը՝ մասնավորապես: Երբ դասախոսությունն ավարտվել է, Թումանյանը, հեզմական ժպիտով, շատ կարճ, բայց տարողունակ խոսք է ուղղել նրան. «**Ես կարծում էի, որ Պոլիսը չեմ ճանաչում, բայց բանից դուրս է գալիս, որ Պոլիսն էլ ինձ չի ճանաչում**»<sup>11</sup>:

Ոչ միայն մեկմեկու գրական ժառանգության արժևորման, այլև, ընդհանրապես, մարդկային այս անհանդուրժողականությունը նկատի ունենալով՝ Յովհաննես Թումանյանը մի առիթով «Թյուրիմացության մութի մեջ» հոդվածում գրում է. «Իհարկե, գոյություն ունին տարածայնության և իրական պատճառներ, բայց երբ մոտիկ ենք ծանոթանում գործերին ու հանգամանքների խորն ենք

<sup>8</sup> Տե՛ս **Ա. Եղիազարյան**, 20-րդ դարի հայ գրականություն, դեմքեր և խնդիրներ, էջ 318:

<sup>9</sup> Տե՛ս **Գ. Սեւան**: Յայրենիք-Սփյուռք գրական կապերը /1920-1985/, Եր., 1988թ:

<sup>10</sup> Տե՛ս **Կ. Դալլաքյան**, Ակնարկներ ..., էջ 356:

<sup>11</sup> **Վ. Թոթովենց**, Երկեր 3 գրքով, գիրք 3-րդ, էջ 509, Եր., 1991թ.:

նայում, ավազկարա տեսնում ենք, որ դժբախտության գլխավոր պատճառը թյուրիմացությունն է, իրար չճանաչելն ու իրար չհասկանալն է: Թյուրիմացությունը, անգիտությունը, անծանոթությունը մի մութը դրություն է. իսկ ամեն չար բան մութիցն է ծնվում»<sup>12</sup>:

20-ական թվականներին որոշ գրականագետների կողմից Պոլսի հայ հասարակական մտքին առաջադրվեց հստակեցնել վերաբերմունքը մեծ բանաստեղծի ու նաև ողջ արևելահայ պոեզիայի նկատմամբ: Պետք է նշել, որ այս հստակեցումը, դիրքերի այս ճշտումը միանշանակ չէր: Սա այն շրջանն էր, երբ Հ. Օշականը մեծ հմայք էր վայելում ոչ միայն այն կրթական հաստատություններում, որտեղ դասավանդում էր<sup>13</sup>, այլև արևմտահայ գրաքննադատական դաշտում և «...որովհետև ուժեղ, արտակարգ անհատականություն էր, ամեն ինչ իր քննությանն էր ենթարկում, որից հետո իրեն պարտադրում հայրենի գրականությանը»<sup>14</sup>:

Օշականը և իր հետևորդները (հատկապես Պ. Սնայանը) չէին ընդունում արևելահայ պոեզիան ընդհանրապես և Թումանյանին՝ որպես ամենայն հայոց բանաստեղծի, գտնում էին, թե չափազանցնում են նրան այդպես մեծարողները: Նա համաձայնում էր, որ Թումանյանը «...իր կերպովը մեծ արուեստագետ մը եղաւ», միաժամանակ դժգոհում, որ նրան «...անիրական փառքի կանչեցին դիրահավան ու քիչ մըն ալ սովորամոլ բերանները», իսկ նրա մահը, Օշականի կարծիքով, դարձյալ, ինչպես ընդունված է մեզանում, տեղի տվեց գրողի վաստակի ու գեղարվեստական ժառանգության անհարկի մեծարման, այդպիսով «...հարուածեց նորէն մեր միտքն ու արժեքներու նոր չափանիշը որուն կը համակրի նորագոյն սերունդը մեր հայրենիքին»<sup>15</sup>: Նրա որակումներում երբեմն զգացվում է արևելահայ գրաքննադատության որոշ ծայրահեղ գնահատականներին ի պատասխան մեղադրական խոսք հնչեցնելու անզուսպ ցանկությունը. «Արեւմտահայ քննադատութիւնը տեսակ մը անտարբերութեամբ, չըսելու համար կանխակալ արհամարհանքով սիրած է մոտենալ արեւելահայ բանաստեղծութեան ամէն անգամ, որ առիթը տրուած է իրեն՝ զբաղուելու անով: Միւս կողմէն՝ արեւելահայերը, այս անգամ բիրտ ուրացումով, դատապարտած են առհասարակ Արեւմտահայ գրականութիւնը եւ առանձնապէս ասոր բանաստեղծութիւնը նոյնիսկ իր ամէնէն տաղանդաւոր ներկայացուցիչներուն մօտ»<sup>16</sup>: Կամ. «Մեզի ծանօթ է անոնց այլամերժ ինքնաբաւութիւնը, ու նոյնքան թանձր երջանկութիւնը: Հեռու չէ այն օրը, երբ անոնց կողմէն «Յեղին սիրտը» եւ «Հեթանոս երգերը» արտադրող բանաստեղծը «մի ոմն պոռնկագիր» կ'որակուէր»<sup>17</sup>:

Անուրանալի է գրադատ Հ. Օշականի կատարած ահռելի աշխատանքը գրաքննադատության բնագավառում: Ու թեև իրեն քննադատ չի համարել, քանի որ

<sup>12</sup> Հ. Թումանյան, Ընտիր երկեր երկու հատորով, հ. 2, էջ 259, Եր., 1985թ.:

<sup>13</sup> Տե՛ս Գ. Սևան, Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր /1920-1945թթ./, էջ 222, Եր., 1980թ.:

<sup>14</sup> Կ. Աղաբեկյան, Հակոբ Օշական, էջ 8, Եր., 2006թ.:

<sup>15</sup> Հ. Օշական, Արեւելահայ դէմքեր, էջ 131, Պէյրուս, 1999թ.:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 132:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 215:

քննադատը գործում է մտքի տիրություն, իսկ ինքը՝ անձնական տպավորություններից ծնվող զգացական ոլորտում, ստվարածավալ աշխատությունների միջոցով համակարգել, համադրել է ըմբոստ ոգիների ստեղծածը: Չնայած իր հայացքների որոշ ծայրահեղությանը՝ նա «...նշանակալից խոշոր դեր ունեցավ գրականության մեջ... և առավելապես մեծ աշխատանք կատարեց գրական քննադատության, գրականության պատմության բնագավառում»<sup>18</sup>: Եվ միայն ցավով կարելի է նշել, որ անլուծելի թվացող հարցը շատ դեպքերում ընդամենը քաղաքական ենթատեքստ ուներ:

Չընդունելով Թումանյանի, Իսահակյանի, Չարենցի բանաստեղծական որակները և արևելահայ պոեզիան՝ սփյուռքահայ գրական տեսական միտքը, Օշականի ազդեցությամբ, երևույթի իրական արժեքից դուրս եկավ և ընդգծեց վարչակարգի վերաբերյալ ունեցած իր դիրքորոշումը: Նրա կարծիքով «ընկերային գաղափարագրությամբ զարգացող այդ գրականութունը զուրկ մնաց ստեղծագործ մեր գաղափարին բարիքեն»<sup>19</sup>: Տրամաբանությունը շատ պարզ է: Քանի որ արևելահայ գրականությունն ամբողջովին արտահայտում է մեծամասնականների (բուլշևիկների)՝ հայությանը պարտադրված գաղափարախոսությունը և տրամադրությունները, ուստի նման գրականությունն անհարազատ է ու չի կարող հայ ժողովրդի ազգային ոգու թարգմանը լինել: Հիշարժան է այն փաստը, որ 1922թ. Օշականը Խորհրդային Հայաստանից Երևանի պետական համալսարանում արևմտահայ գրականության պատմություն դասավանդելու հրավեր է ստանում: Նա մերժում է այն, քանի որ անվստահությամբ էր վերաբերվում տիրող վարչակարգին: Այդ օրերին նույնատիպ հրավեր էր ստացել նաև Կ. Չարյանը և ընդունել այն: Նա հիշում է. «Պոլսից մեկնելու ժամանակ Օշականն ասում էր. «Չեմ կարծեր, որ հոն մեր գրականութունը հասկանան, յամենայնդեպս գնա, ...տես, ...գրե, կը մտածենք»<sup>20</sup>:

Որոնք են այդ դեպքում հայ գրականության օշականյան չափանիշները: Ազգային գրականությունը Օշականը համարում է յուրաքանչյուր ժողովրդի հոգեկերտվածքի բյուրեղացված արտահայտություն ու բազմիցս կրկնում. «Գրականություն մը ժողովուրդ մըն է», «Գրականություն մը արյան երևույթ է, միտք, խելք, ոճ, արվեստ ըլլալե առաջ»<sup>21</sup>: Այսինքն, գիրը, գրականությունը գոյություն ունի և կարող է դիտարկվել միայն որպես երկրի կերպար, ինչպես բնաշխարհը, այդ երկրի մարդը, երկրի պատմությունը, սովորույթները, կենցաղը, խոսքը<sup>22</sup>...

Գրականագետը ստվարածավալ աշխատությունների միջոցով համակարգել, համադրել է հայ գրի ու արվեստի մշակների թողած ժառանգությունը: Եվ իր հողվածներում, սկսած «Մեհյանի» «Հարթենք»-ներից (որն, ի դեպ, միանշանակ չի ընդունվել արևելահայ գրաքննադատության կողմից) ու շարունակություն

<sup>18</sup> Գ. Սևան, Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր /1920-1945թթ./, էջ 15:

<sup>19</sup> 3. Օշական, Ձուգակշիռ արևելահայ եւ արեւմտահայ գրականութեանց, էջ 25, Պէյրուք, 1999թ.:

<sup>20</sup> Տե՛ս Կ. Չարյան, Երկեր, էջ 123, Եր., 1985թ.:

<sup>21</sup> 3. Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 1, էջ 96,97, Երուսաղէմ, 1945թ.:

<sup>22</sup> Տե՛ս Դ. Գասպարյան, Հայ գրականություն (Հակոբ Օշական), Եր., 2000թ.:

գտած իր գրական ուսումնասիրություններում, գրողներին նվիրված մենագրություններում և գեղարվեստական երկերում, հայ գրականության արժեքավորման նրա չափանիշներն են *հայոց աննկուն ոգին, հայ շունչը, հայոց հոգու ավազանը պղտորություններից, մտվածքներից, օտարոտի ազդեցություններից մաքրագործելու ճիգն ու ջանքը*<sup>23</sup>:

1914թ. Կ. Ջարյանի հետ հիմնում է «Մեհյանը»: Թեև հանդեսին հմայք էր տալիս Դ. Վարուժանի ներկայությունը, բայց քուրմը Օշականն էր: «Մեհյանը» արևմտահայ գրական առաջընթացի հերթական ու շողշողուն փուլն էր, որի հիմնադիրները համախմբված էին զգում իրենց Կոստան Ջարյանի շուրջը: Նրան էր պատկանում համահայկական, համազգային գրականության քարոզը, որ հետևյալ ձևակերպումն էր ստացել. «Մեր գրականությունը մեկ է...Բոլոր հայերում ժառանգությունն է ան»<sup>24</sup>: Այս հանդեսի հանգանակում Օշականը գրում է. «...մենք պիտի նայինք արուեստագետին վրայ մեր իսկ խառնուածքին հայելիովը...Մեր գնահատումներուն մէջ մենք պիտի մնանք բացարձակապես անկախ ընկերային պայմաններուն ստրուկ որոշադրութիւններէն ոչ մէկ հոսանք, ոչ մէկ կուսակցութիւն, ոչ մէկ գռեհիկ կամ յաջողուած հաւատք կշիռ չունին մեզի համար: **Մենք անկախականներ ենք: Ու մեր վճիռները կբխին մեր անհատականութենէն**»<sup>25</sup>: Ահա սրանք են նրա չափանիշները, որոնք փաստորեն, կրում են վառ ընդգծված սուբյեկտիվ երանգներ: Ու կարծեք թե բնական է սա, քանի որ իրենց բնույթով ու ծագումով բոլոր արվեստներն էլ սուբյեկտիվ են: Հիշարժան է Գյոթեի խոսքը այս առումով. «Մարդ երբ խոսում է կամ որևէ բան է ուզում ապացուցել, այդ պահին կամա թե ակամա միակողմանի է դառնում, առանց անջատելու, առանձնացնելու չի կարելի որևէ բան ապացուցել»<sup>26</sup>: Ըստ Օշականի՝ գրող արվեստագետը ոչ այլ ինչ է, եթե ոչ «զգայնության ու թեքնիկի գումար մը», ուրեմն բնական է, որ նրա ծանաչման եղանակը նույնպես զգայնությունն է, այսինքն՝ զգացական այն զրգիռը, որ հարուցում է այս կամ այն գրական երկի ընթերցումը: Այսպիսով, նրա մեջ ձևավորվում է տպավորապաշտը, որ գեղագիտական ու փիլիսոփայական իր համակարգով նույնամուն է իմպրեսիոնիզմի հետ<sup>27</sup>: Այս կերպ նա Իսահակյանին որակում է «նոր ժամանակներու աշուղ մը», Չարենցին՝ «ապերասան, անփոյթ, ոչ-ճարտարապետ տղա», ինչը հիմնավորում է նաև իր անձնական տպավորություններով:

Պոլսահայ գրադատության մի մասը հակված էր այն կարծիքին, թե ամբողջ արևելահայ պեզիային հասու չէ զգացմունքը, թե գրեթե ամբողջությամբ այն քարոզչություն է ու հրապարակագրություն. «Ռուսահայ գրականութիւնը, սկիզբէն ի վեր, իր անդրանիկ մշակներուն ներարկած ոգիէն տարուելով կը ձգտի առաւելապէս օգտակարին (util)...Գրագէտներուն մեծ մասը հոն ունի բարոյախօսի ծանր ծիրանին...»<sup>28</sup>, միաժամանակ հենց Օշականն էլ նշում էր, որ երկուստեք

<sup>23</sup> Կ. Աղաբեկյան, Հակոբ Օշական, էջ 18:

<sup>24</sup> Տե՛ս Կ. Ջարյան, Երկեր, էջ 5:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>26</sup> Գյոթե, Իմ կյանքից. բանաստեղծություն և ճշմարտություն, էջ 328, Եր., 1986թ.:

<sup>27</sup> Տե՛ս Ս. Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, հատոր 3-րդ, էջ 532, Եր., 2002թ.:

<sup>28</sup> 3. Օշական, Արևելահայ դեմքեր, էջ 178:

արվեստի «ըմբռնումը կը տարբերի մէկ քանի սեռերու ու մասնաւորաբար բանաստեղծութեան համար» և ընդհանրապէս «...արուեստի մասին երկու հատուածներուն մէջ ըմբռնումի բաւական բաց տարբերութիւն կայ»<sup>29</sup> (ընդգծումը՝ Ն. Ի.): Եվ կարծեք թե պարզ է ամեն ինչ ու հասկանալի այսպիսի եզրահանգման դեպքում, սակայն նա շարունակում է մնալ իր ծայրահեղ անհանդուրժող դիրքորոշման վրա:

Ու չնայած ըմբռնումների այս տարբերությանը, որն ընդգծում է հենց ինքը՝ գրադատ Օշականը, համարձակությամբ ներկայացնելով գրականության չափանիշների իր աներկբա պատկերացումները՝ նա առաջադրում է հայ գրական ժառանգության համատեղելիությունը դրանց հետ: «Ու կարճ ըլլալու համար-դէմ ենք տափակին ու կեղծին, խոշորին ու սուտին, թեթելին ու հովին, բռնիին ու ներկուածին, տենդենցիօզին ու դեկրէտով բռնադրուածին: Յաւակնոտ ալ չենք արուեստը մերն ու միայն մեր պապենական իրը, ձիթաստանը ընդունելու: Ազատութի՛ւն: Ահա մեր ուզածը: Ու կը տառապինք երբ նոյն այդ ազատութեան անունով այնքան գերութիւն կը դիզեն մեր գիշներուն»<sup>30</sup>: Անգիջում է նա, եթե եվրոպական գրականության ազդեցությամբ խմորված արժևորման իր չափանիշներին չի համապատասխանում գրական երկը *թե արևմտահայ, թե արևելահայ* հատվածներում: Սրանով է պատճառաբանում իր մոտեցումները հայ գրականության երկու հատվածների վերաբերյալ. «Ինձի թող չառարկեն, թէ անիրաւութիւն է գրագէտ մը դատել իրմէն դուրս: Գրական քննադատութեան փորձերու մէջ ինձի բացարձակ մտահոգութիւն է եղած մեր գրականութեան գործերը մօտեցնել ընդհանուր գրականութեանց մեծ սրբարանին: Տժգոյն ու տխուր է այն արուեստը, զոր կը վախենան ցուցադրելու ուրիշներուն... Մեր Վարուժանն ու Մեծարենցը չեն վախենար ամէնէն խստադատ ճաշակներէն»<sup>31</sup>:

Երկու հատվածների գրականությունների նկատմամբ օշականյան մոտեցումը, ըստ իս, հաճախ իրականանում էր որոշակի պատրաստի կադապարների թելադրանքով, որոնց կենտրոնական միտումը արվեստի ինքնաբավության մասին վաղուց հայտնի բանաձևն էր: Արվեստը արվեստի՞ համար, թե՞ արվեստը կյանքի համար: Սա հին վեճ է: «Գրաքննադատական մտքի ձևավորման ողջ ընթացքում հայ իրականության մեջ մեծ մասամբ ղեկավարվում էին *կամ-կամ* սկզբունքով: Հազվադեպ էին այն մտածողները, որոնք զոնե տեսության բնագավառում հնարավոր էին համարում *և-և* սկզբունքը»<sup>32</sup>: Երկուստեք էլ շատ բարդ ու դժվար էր մեկմեկու զգացական ու իմացական գրական արդյունքի ընկալումը: Այս տարանջատվածությունը բերեց երկու հատվածների գրական ըմբռնումների միջև հոգեբանական պատմեչի գոյացմանը, որը հաղթահարված չէ մինչև այսօր:

Ինչ վերաբերում է Հ. Թումանյանի գրական ժառանգության գնահատմանը, ինչպես վերը նշեցինք, Օշականի՝ երբեմն չափազանց սուբյեկտիվ ու ծայրահեղ համարձակ, եթե չասենք հանդուգն, որակումները շատ հաճախ արսուրդի են

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 132,174:

<sup>30</sup> **3. Օշական**, Գրականութեան համար ( Գրիգոր Յակոբեանի աշխատասիրութեամբ), էջ 38, Եր., 1997թ.:

<sup>31</sup> **3. Օշական**, Արեւելահայ դէմքեր, էջ 196:

<sup>32</sup> **4. Դալլաքյան**, Ակնարկներ ..., էջ 370:

հասնում: Օրինակ՝

1. «Թումանեանի լեզուն չունի պերճանք ու գոյն: Անիկա չ'ախորժիր բառերու մոգութենէն»(Արեւելահայ դէմքեր, էջ 120):

2. «..Երբ Պոլիս բանաստեղծին հետ քառեակներուն վրայ կը խօսինք, անիկա հաւատքն ունէր անոնց արժէքին»(էջ 138):

3. Չգտումնավորությունը, օգտապաշտությունը գրականության մեջ համարելով ժամանակավրեպ կամ մերժելի երևույթ՝ Թումանյանի մասին գրում է, որ «...օգտապաշտներուն յաջորդ սերունդէն է եւ անոր ամենէն կարկառուն դէմքը» (էջ 133):

4. Նրան համարելով ավելի շատ մտքի բանաստեղծ, քան զգացմունքի, փիլիսոփա, մտածող, ժողովրդական իմաստություններ քարոզող՝ գրում է. «... ու քնարական քերթուածներէն մինչեւ քառեակները՝ իր մտածող մարդու բոլոր փորձերը մեզ չեն խանդաւառեր... Յովհաննէս Թումանեան երազին բանաստեղծը չէ»(էջ 137):

5. Լռովա չքնաղ բնաշխարհին իսկ Թումանյանին չի հաջողվել հյութեղ գույներով վրձնել: Գույնի, կենդանությանը շնչող բնապատկերների պակաս է նկատում. «Թումանեանի պատկերները գծագրութիւններ են, ինչպէս եւ պարագան ամբողջ Արեւելահայ գրականութեան»(էջ 138):

Ու այնուհետև կարծեք թե փորձում է մեղմել իր խոսքը. «Անոնք, որ իր արուեստը քիչ մը սովորական եւ իր աշխարհը մանկօրէն հեքիաթունակ կը գտնեն, անոնք, որ իր ստեղծած գեղեցկութեանց խորը ազնուական, չըսելու համար՝ համամարդկային քիչ տարրեր կը տեսնեն, անոնք, որ վերջապէս անոր ոճը կը կարծեն քիչ մը շատ թեւազուրկ, անոնք պարտաւոր են անդրադառնալու գրագէտին չափ, զայն արտադրող տեղին ալ վրայ: Անոնք, մասնավորաբար դժվարահաճերը, պարտաւոր են նկատի ունենալ պատմութեան որոշադրութիւնը, դեռ կէս դարու անցեալ մը ճշդող գրականութեան մը անխուսափելի անկատարութիւնը»(130):

Պետք է նշել, որ արևմտահայ գրադատներից շատերը քննադատության ասպարեզում հաստատուն հեղինակություն էին ընդունում Զ. Օշականին և վերջին խոսքի իրավունքը նրան տրամադրելով անգամ (Թումանյանի առիթով «Նոր շարժում» պարբերականի խմբագիր, գրականագետ Գուրգեն Մխիթարյանը նշում է, որ սփյուռքահայ գրադատության մեջ վերջին խոսքը պատականում է Օշականին<sup>33</sup>), միակարծիք չէին Թումանյանի ստեղծագործության գնահատման հարցում: Օշականի հետևորդների դեպքում հարցն ինքնին պարզ էր, սակայն կային նաև Ն. Աղբալյանը, Լ. Շանթը, Ա. Չոպանյանը, որոնց գրաքննադատական հայացքները ևս ազդեցության մեծ դաշտ ու հենարան ունեին: Ահա, թե ինչպէս է արտահայտվել Չոպանյանը Յովհաննէս Թումանյանի ստեղծագործական աշխարհի վերաբերյալ. «Կարելի է ըսել թե նոյն ինքն հայ ցեղն էր, որ անոր մեջ ինքզինքը կերպեր իր հատուկ զգայնությամբ ու մտայնությամբ, իր բնորոշ ոգիով ու ճաշակով: Մեր ներկա բանաստեղծներուն ամենէն «ազգայինն» էր Թումանյան, ամենէն «Հայը», ամենէն ավելի ցեղային համն ու հոտը բնականորէն և ճոխապէս ունեցողը»<sup>34</sup>:

<sup>33</sup> Տե՛ս Կ. Դալլաքյան, Ակնարկներ ..., էջ 310:

<sup>34</sup> Ա. Չոպանյան, Երկեր, էջ 729, Եր., 1988թ.:

իր պատկերացմամբ անկողմնակալ հայացքի տակ պահելով բանաստեղծի ստեղծագործական աշխարհը՝ Օշականն այնուհետև անդրադառնում է Թումանյանի՝ իր կարծիքով ամենահաջող կողմերին, նշելով դարձյալ, որ ավելի շատ հիմնվելու է իր անձնական տպավորությունների վրա:

1. «Բոլոր այս վերապահումները պատճառ չեն, որ Յովհաննէս Թումանեան դադարի ժամանակակից գրականութեան ամէնէն հարագատ բանաստեղծը ըլլալէ» (էջ 172):

2. «Թումանեանի ամէնէն անկեղծ արտայայտութիւնները իր պոեմներն են: Անոնցէ մէկը, օփերայի վերածուած ներկայացուեցավ հոս ու դեռ մտքերու մէջ չէ մարած անոր տպաւորութիւնը... Արեւմտահայերը հակառակ իրենց նրբութեան վրայ ունեցած հաւատքին եւ յավակնութիւններուն, դեռ չեն կրցած տալ մեզի խորհուրդն ու մաքրութիւնը քերթուածի մը, որ «Անոյշ»ին մէջ կը բուսնի յանկարծ, անդիմադրելի՝ ձեւին գեղեցկութեամբը եւ մտածման ինքնատիպութեամբը»<sup>35</sup>:

3. Այնուհետև հիացմունքով խոսում է նրա լեզունդների մասին. «Թումանեանի լեզուները ամէնէն համով առասպելներն են, որ կարդացած ըլլամ, անշուշտ տղայ օրերուն» (էջ 127), մասնավորապես «Փարվանայի», «Լուսավորչի կանթեղի» համար (վերջինը զետեղել է հայ գրականության՝ իր կազմած դասագրքում<sup>36</sup>) այսպես է արտահայտվում. «Այս երկուքը պիտի բաւեն, որպեսզի Յովհաննէս Թումանեան բարձրանայ մեր ամենամեծ բանաստեղծներուն աստիճանին եւ ուրախ եմ յայտարարելու, որ այս արժեւորումը կու գայ իրեն՝ մեր անվերապահ համակրանքէն» (էջ 128): «Այս կարգէ գրոյցներ, աւանդութիւններ երբ միւթ դառնան բանաստեղծական մշակումի, (այսինքն երբ տաղանդաւոր բանաստեղծ մը ժողովրդական այդ հուն միւթերը ենթարկէ ստեղծող երկունքի, և զանոնք վերակազմած դուրս բերէ) արդիւնքը կ'ըլլայ առաջնակարգ գեղեցկութեամբ արուեստի գործ մը: Մեր ժողովուրդը շատ ունի այդ միւթերէն: Բայց մեր գրականութիւնը դեռ չէ շահագործած ատոնք: Արեւմտահայ հատուածը ապերախտ փորձեր միայն տուաւ: Արևելահայերը ավելի յամառ աշխատանք նուիրած են այդ ուղղութեամբ: Անոնցմէ մեկը, ամէնէն տաղանդաւորը, *Յովհաննէս Թումանեան*, օգտագործած է այդ կարգի տարրեր»<sup>37</sup>:

4. «Պ. Թումանեան մեր օրերուն գեղեցիկ երուելոյթ մըն է: Ոչ մէկը մեր բանաստեղծներէն կրցաւ անոր չափ բազմածեւ եղանակով մը բացատրել մեր հոգին, ըսել կ'ուզեմ՝ *հայ հոգին*» (էջ 129):

Համադրության այս անհամաչափ սահմաններում է, որ ի հայտ է գալիս բացասման տեսությունն իբրև արժեքների գնահատման չափանիշ: Անիմաստ չի հնչում Օշականի այն բնորոշումը, թե «տպավորապաշտ քննադատութիւն մը ի վերջո ուրիշ բան չէ, եթե ոչ գայլը՝ գառնուկի մորթով»<sup>38</sup>:

Որքանով էին արդարացի Օշականի կողմից արևելահայ պոեզիային տրված գնահատականները, մոտեցումները և գրական երևույթներին ու մեծությունները:

<sup>35</sup> **3. Օշական**, Արեւելահայ դէմքեր, էջ 120, 122:

<sup>36</sup> Հայ գրականութիւն, կազմեց **3. Օշական**, էջ 518, Երուսաղէմ, 1942թ.:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 516:

<sup>38</sup> Տե՛ս **Ս. Սարինյան**, Հայոց գրականության երկու դարը, հատոր 3-րդ, էջ 538:

րին տրված նրա որակումները, խիստ վիճելի հարց է: Կան և միշտ էլ կարող են լինել ընդունելի և անընդունելի կարծիքներ: Հակամետ ենք գրականագետի կարծիքին, թե Օշականի գնահատումների, գրական ստեղծագործությունների արժեքավորման մեջ կան ակնհայտ վրիպումներ, բացթողումներ, երբեմն էլ դիտավորություններ, որ տեղիք են տալիս ինչ-ինչ անհասկացությունների, ...որ նրա քննադատական համակարգում երբեմն դուրս են լողում համառ ինքնավստահությամբ տապակված սուբյեկտիվ մոտեցումներ, նույնպես անվիճելի է<sup>39</sup>: Ինչպես նշում է գրականագետ Կ. Դալլաքյանը, հայ գրականության մեջ թումանյանի դերի և օշականյան գահատման համակարգի թնջուկի պատասխանը հավանաբար պետք է փնտրել բանաստեղծի ստեղծագործական աշխարհի բազմատարրության մեջ: Ի տարբերություն Նալբանդյանի, Իսահակյանի, Տերյանի, Չարենցի, որոնց ստեղծագործությունը արևմտահայոց աչքում միատարր էր (անձնական կամ անանձնական)՝ Թումանյանի աշխարհում տիրապետող բազմատարրությունն էր, որը դուրս էր ֆրանսիական տեսական մտքի կադապարներով ձևավորված սփյուռքահայ գրադատության ընթանողությունից: Նրան համակարծիք է նաև Հրանտ Թամրազյանը. «Թումանյանի մեծությունը բազմաթիվ տարրերի և էպիկական ծուլվածքի մեջ է, որը և ստեղծում է գեղարվեստի բարձր որակ: Դա մեր երջանկությունն է, որ գրականության մեջ ունեցանք այսպիսի արարիչ բանաստեղծ: Ոչ մի բանաստեղծ իր երկրի համար այնքան անհրաժեշտություն չէր, ինչպես մեզ համար Հ. Թումանյանը»<sup>40</sup>: «Մեր բանաստեղծության մեջ մեկամաղձոտությունը, ողբը կտիրեն. Թումանյանի գործը փթթում մըն է հոգեկան լուսավոր ու արու առողջության. անոր երգը ուժի, զվարթության, հավատքի, լավատեսության պոռթկում մըն է, պայծառ ու խրոխտ նույնիսկ ցավի արտահայտության մեջ», - գրել է Արշակ Չոպանյանը<sup>41</sup>: Մինչև անգամ գրադատ Օշականի հեղինակությունն անվերապահորեն ընդունող սփյուռքահայ որոշ գրականագետներ (Հ. Ավագյան, Գ. Մխիթարյան, Ա. Աբեղյան, Մ. Պարսամյան) նկատում են արվեստի այնպիսի բաղկացուցիչների առկայությունը Հ. Թումանյանի ստեղծագործություններում, ինչպիսիք են ստեղծագործության *ուժն ու կորովը, պայծառությունը, լույսն ու զգացումը, կախարհորեն վարակելու կարողությունը* և այս ամենը «միանալով կը բոլորեն անոր ճակտին շուրջ անմահության պսակը»<sup>42</sup>:

Հետաքրքրական է ծանոթանալ նաև Օշական քննադատի կողմից գրական երկի վերլուծման յուրահատուկ եղանակներին: Իր կազմած Հայ գրականության դասագրքում նա զետեղել է «Լուսավորչի կանթեղը» ժողովրդական ավանդության երեք մշակում՝ Վ. Թեքեյանի, Հ. Թումանյանի, Հ. Հովհաննիսյանի հեղինակությամբ: Ինչպես և կարելի էր կռահել, մշակաման, բանաստեղծական արվեստի, լեզվի մաքրության տեսանկյունից քննելով վերոհիշյալ երեք ստեղծագործությունները, նա նախապատվությունը տալիս է Թեքեյանի գործին, քանի որ «...արևելահայերը այդ մշակումը կատարած են շատ նախնական արուես-

<sup>39</sup> Կ. Աղաբեկյան, Հակոբ Օշական, էջ 24, 51:

<sup>40</sup> Հ. Թամրազյան, Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, էջ 126:

<sup>41</sup> Ա. Չոպանյան, Երկեր, էջ 730:

<sup>42</sup> Տե՛ս Կ. Դալլաքյան, Ակնարկներ ..., էջ 360:

տով մը: Ժողովրդական երգերու *մօթիքները* կը ղեկավարեն անոնց չափն ու երբեմն ալ յանգերու բաշխումը... Ժուժկալութիւնն ալ, որ անբաժան առաքինութիւն մըն է նախնական արուեստի գործերուն, անոնց մոտ կը վերածուի գրեթէ անխուսափելի աղքատութեան: Անոնց մէջ շատ զուսպ, գրեթէ ցամքած է բանաստեղծական յուզումը»<sup>43</sup>: Համադրելով Հովհաննիսյանի, Թումանյանի մշակած տարբերակների լեզվական նկարագիրը, գրադատը գտնում է այն չափազանց պարզ. «Արևելահայերը պարզ են՝ աղքատ ըսելու չափ: Արևմտահայերը՝ բարդ, չհասկցուելու գինով: Առաջինները՝ *սովորական, հասկանալի, յստակ* ու ժողովրդական մնալու ձգտումներով: Երկրորդները՝ առհասարակ՝ *անսովոր, դժուարամատոյց*, անձնական ու ինքնատիպ մնալու ցանկութիւններով»<sup>44</sup>:

Այնուհետև «Լուսավորչի կանթեղը» լեզունը ենթարկում է մանրագին քննութեան՝ այն բաժանելով մանրագույն մասերի: «Քերթուածին գլխաւոր մասերը - ա) տեղը, բ) խորհուրդն ու անոր բացատրութիւնը, գ) յառումի, հավատքի բաժին, դ) նոր արշալոյս /երազի/, ե) Լուսաւորիչ եւ անոր արցունքը, զ) աստղին յաւիտենական գոյութիւնը, է) բարութեան, անձնագոհութեան, արցունքի դաս մը»<sup>45</sup>: Ըստ իս, գրական ստեղծագործութեան այս կարգի վերլուծական մասնատումը տանում է նրա ամբողջական նկարագրի ու խորքային ըմբռնման բացառմանը: Նույնիսկ նրա գրադատական հեղինակությունն անվերապահորեն ընդունող գրականագետ Գուրգեն Մխիթարյանը հավանութեան չի արժանացնում Օշականի այս վիրաբուժական եղանակը. «Ջիղ-ջիղ կը գատնէ իրարմէ, յուրաքանչյուր գործարան գատ-գատ, իրենց մանրամասնութիւններով ու դերերով կը ներկայացնէ», ապա երբ վերջապէս ավարտվում է այս անդամագնությունը «գործողութեան սեղանին վրա կը տեսնենք ջիղ, դընդեր, ոսկոր և ամեն բան. իսկ դեմքն ու մարմինը իբրև ամբողջութիւն չկան այլևս»<sup>46</sup>:

Տպավորապաշտի իր պատկերացումներով՝ միապաղաղ, միօրինակ, սովորական դարձած հեշտագրութեան, պարզունակութեան ծանոթ ճանփաներից նա ջանաց հանել մի ողջ գրականություն, փոխել ավանդական դարձած մտայնությունը: Արդեն փիլիսոփայորեն միանգամայն տարողունակ է նրա ազնիվ խոստովանանքը, թէ «Օշականի քննադատութիւնը դպրոց չէր կազմած, բայց իր ժխտական մասերովը անիկա ըրավ որոշ բարիք»<sup>47</sup>: Նա բացում է փակ ջրհորներ, սկզբնավորում նոր ուղղություն, ճանապարհ հարթում նորերի համար: Ստեղծագործող անհատը, իբրև ամբողջի միավոր, առանց խեղաթյուրելու իր «դիմագծային ճշդութիւնը», իր մեջ կրում է ամբողջի (ցեղի) հոգու ավազանի անխառն տարրերը, արյան բաբախը, սրտի զարկը, ոգու կորովը և դրանք մասնավորում անհատականութեան «յատուկ կնիքով»<sup>48</sup>: Հայոց գրականությունը մի նոր, առավել մշակված ճանապարհի վրա /ոչ պարտադիր եվրոպական տեսա-

<sup>43</sup> Հայ գրականութիւն, կազմեց **Յ. Օշական**, էջ 520-521:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 522:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 524:

<sup>46</sup> Կ. **Դալլաքյան**, Ակնարկներ..., էջ 321:

<sup>47</sup> **Յ. Օշական**, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 10, էջ 306, Անթիլիաս, 1982թ:

<sup>48</sup> Տե՛ս **Կ. Աղաբեկյան**, Հակոբ Օշական, էջ 19:

կան մտքի ազդեցությամբ/ տեսնելու փափագով՝ Թումանյանն էլ շատ հարցերում համակարծիք է Օշականին. «Ամենքն էլ գրականությամբ պարապել են ի միջի այլոց, պատահաբար, ոտի վրա: Ամենքն էլ եղել են խանգարված գրողներ, և ամբողջ մեր գրականությունն էլ խանգարված գրողների խանգարված գրականությունն է»<sup>49</sup>:

Որքան էլ որ Օշականի մոտեցումները ազնիվ մղումներով են համեմված («Ոչ ոքի դեմ նախապաշարում: Գեղեցկութունը ավելի կ'արժե քան բարիքը, բայց ավելի չար չ'ըներ մարդը: Ու զայն կը պոռանք ուր որ կը հանդիպենք իրեն: Արուեստն ու գեղեցկութունը անհատին կը պատկանին»<sup>50</sup>), ծայրահեղությունները գալիս են աղավաղելու նրա, անգամ ամենալուսավոր ու ճշմարիտ հայացքները՝ իրենց հետ բերելով չհասկացված լինելու վտանգավոր համախտանիշը: Ցավալի է, իհարկե, որ Օշականի պես վառ անհատականությունը՝ հայ գրաքննադատության պատմության մեջ խոր հետք ու հետևորդներ թողած գրադատը, հաճախ տուրք տալով ժամանակի քաղաքական կաղապարված մոտեցումներին, անկարող եղավ վեր կանգնել սուբյեկտիվ մտասևեռումներից՝ զմահատումներ քաղելով իր տպավորապաշտ հոգու ելևէջումներից: Թումանյանի գողտրիկ աշխարհի բազմատարր ներդաշնակությունը անհասանելի մնաց նրա դժվարահաճ հոգուն:

Սակայն մի բան կարելի է նշել անառարկելիորեն. նա գրականության ամենացորդ նվիրյալն է և ինչի մասին գրում է, գրում է անկեղծ հավատով: Առաջին հայացքից կարող է թվալ, թե դեպի կատարելության ձգտող նրա չափանիշները պետք է հարթեին գրականության պատմության անդաստանները և անկատարության ընդհանուր քառսից առանձնացնեին միայն հատուկեմտ արժեքներ: Սակայն ի հեճուկս առերևույթ ցայտող քամահրանքի, Օշականի բացասման մեթոդը դրական սկիզբ ունի և նրա վերլուծական գործողությունը միտված է ոգեղեն, մնայուն արժեքի հայտնաբերմանը<sup>51</sup>:

Նա սրտացավությամբ է մոտենում թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ գրականությանը, հավասար հպարտությամբ անդրադառնում նվաճումներին, գրական արժեքներին և նույն խստությամբ դատապարտում թերությունները. «Երկու հատուածներն ալ ունեցան իրենց չափազանցումները: Եկաւ ատեն մը ու շատ մօտ է ան, որ ռուսահայ ոտանաւորները հասարակ տաղաչափութեամբ traite de morale-ներ դարձան: Եղան օրեր, որ թրքահայ քերթուածը ապակիի պէս բարակ, սառած մեռել մը եղաւ»<sup>52</sup>: «Մեր երկու գրականություններն ալ արժանի են մեր խորունկ գուրգուրանքին, քանի որ մեր ստեղծագործ ընդունակութեանց փաստերը կբերեն այսքան դժնդակ պայմաններու միջոցին...»: Բերում են «...իմ հիացումս առանց սակարկելու բոլոր անոր (գրականության - Ն. Ի.) վաստակաւորներուն, որոնք աշխատեցան ի հեճուկս ամենադժնդակ պայմաններու եւ ձգեցին մեզի կենդանի, գունագեղ եւ խրախուսիչ ժառանգութիւնը մեր զոյգ նորոգ գրականութեանց: Թող օրինուի անոնց հիշատակը»<sup>53</sup>:

<sup>49</sup> **Յ. Թումանյան**, Ընտիր երկեր երկու հատորով, հ. 2, էջ 432:

<sup>50</sup> **Յակոբ Օշական**, Գրականութեան համար, էջ 27:

<sup>51</sup> Տե՛ս **Ս. Սարինյան**, Հայոց գրականության երկու դարը, հատոր 3-րդ, էջ 538:

<sup>52</sup> **Յ. Օշական**, Արևելահայ դէմքեր, էջ 178:

<sup>53</sup> **Յ. Օշական**, Ջուզակչիռ արևելահայ եւ արևմտահայ գրականութեանց, էջ 233:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՈՒՆ

1. Աղաբաբյան Ս., Հայ սովետական գրականության պատմություն, հ. 1-ին, Եր., 1986:
2. Աղաբեկյան Կ., Հակոբ Օշական, Եր., 2006թ.:
3. Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականություն, Եր., 1987թ.:
4. Գասպարյան Դ., Հայ գրականություն (Հակոբ Օշական), Եր., 2000 թ.:
5. Գյոթե, Իմ կյանքից. բանաստեղծություն և ճշմարտություն, Եր., 1986թ.:
6. Դալլաբյան Կ. Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության, Եր., 1994թ.:
7. Եղիազարյան Ա., 20-րդ դարի հայ գրականություն, դեմքեր և խնդիրներ, Եր., 2002թ.:
8. Զարյան Կ., Երկեր, Եր., 1985թ.:
9. Թամրազյան Ջ., Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, Եր., 1986թ.:
10. Թոթովենց Վ., Երկեր 3 գրքով, գիրք 3-րդ, Եր., 1991թ.:
11. Թումանյան Ջ., Ընտիր երկեր երկու հատորով, հ. 2, Եր., 1985թ.:
12. Չոպանյան Ա., Երկեր, Եր., 1988թ.:
13. Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, հատոր 3-րդ, Եր., 2002թ.:
14. Սեւան Գ., Հայրենիք-Սփիւռք գրական կապերը /1920-1985/, Եր., 1988թ.:
15. Սևան Գ., Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր /1920-1945թթ./:
16. Օշական Յ., Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 1, Երուսաղէմ, 1945թ.:
17. Օշական Յ. Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 10, Անթիլիաս, 1982թ.:
18. Օշական Յ., Արեւելահայ դէմքեր, Պէյրուք, 1999թ.:
19. Օշական Յ., Զուգակշիռ արեւելահայ եւ արեւմտահայ գրականութեանց, Պէյրուք, 1999թ.:

## АКОБ ОШАКАН О ТУМАНЯНЕ

*Н. М. ИСКАНДАРЯН*

Ованес Туманян, бесспорно, самый выдающийся писатель новой армянской литературы. Чистота и прозрачность его слов у некоторых критиков иногда вызывали непонимание и, соответственно, принижение его творческого вклада. Одним из таких критиков является известный своей бескомпромиссностью Акоб Ошакан.

Некоторые его высказывания по поводу оценки поэзии О. Туманяна явились предметом анализа в этой статье.

## ՀԱԿՈԲ ՕՏԻԱԿԱՆ ԱՅՈՒՆ ԹՈՒՄԱՆԻԱՆ

*N. M. ISKANDARYAN*

Hovhannes Toumanian, unquestionably is the most outstanding writer of the new Armenian literature. Purity and clarity of his words have sometimes caused misunderstanding to some critics and, accordingly, belittling of his creative heritage. One such critic is Hakob Oshakan.

Some of his statements on the evaluation of Toumanian's poetry have become the subject of analysis in this article.